ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 10 ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ԴԻՄՈՂ ԿՈՂՄԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Բավարարել դիմող կողմի՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության՝ 18.04.2009թ. գրությունը գործին կցելու վերաբերյալ 05.05.2009թ. միջնորդությունը, և նշված գրությունը սահմանված կարգով կցել գործին։

2. Բավարարել դիմող կողմի՝ 07.05.2009թ. միջնորդությունը՝ միջնորդությանը կից ներկայացված՝ Հայտնաբերված տարբերություններով ցուցակը՝ 32 էջից, և ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն ուղարկված պաշտոնական գրությունների ու դրանց պատասխանների պատճենները գործին կցելու վերաբերյալ, և նշված լրացուցիչ փաստաթղթերը սահմանված կարգով կցել գործին։

3. Մերժել դիմող կողմի՝ ««Հայ ազգային կոնգրես» նախընտրական դաշինքի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու վերաբերյալ 05.05.2009թ. միջնորդությունը՝ նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանն իր՝ 21 ապրիլի 2009 թվականի ՍԴԱՈ-33 աշխատակարգային որոշմամբ նշված գործի դատաքննությունը որոշել է անցկացնել գրավոր ընթացակարգով, և որ արդեն իսկ առկա են գրավոր ընթացակարգով գործը քննելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

7 մայիսի 2009 թվականի
ՍԴԱՈ-41